Հաստատված է

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի

Գիտական խորհրդի 2025թ. մարտի 6-ի N1-03/25/2 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ն.Ա.Միքայելյան

ԿԱՐԳ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ Քոլեջ) ուսումնամեթոդական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2 Ուսումնամեթոդական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) կոլեգիալ սկզբունքով գործող խորհրդակցական մարմին է, որը քննարկում է Քոլեջի առաքելության ու նպատակների որակյալ իրականացման գործում ուսումնամեթոդական հենքին առնչվող հարցերն ու խնդիրները:

2. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Ուսումնամեթոդական խորհուրդը ձևավորվում է մանկավարժական խորհրդի առաջին նիստում, գործում է մեկ ուսումնական տարի, նիստերը գումարվում են ուսումնական տարվա մեջ 3-4 անգամ, անհրաժեշտության դեպքում արտահերթ:

2.2 Խորհրդի կազմում մտնում են տնօրենի տեղակալները, ամբիոնների, դեպարտամենտների վարիչները, փորձառու դասախոսները, բաժինների վարիչները, մեթոդիստը, ՈԱԲ-ի պատասխանատուն, ուսանողներ: Խորհուրդը նախագահում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, որն ընդունած որոշումները ներկայացնում է տնօրինական կամ մանկավարժական խորհրդներում, տնօրենի երաշխավորությամբ Համալսարանի Գիտական խորհրդին:

3.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը համակարգում է ուսումնական գործընթացը:

3.2. Քննարկում և երաշխավորում է՝

- Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը,

- Գործող և նոր բացվող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,
- Դասավանդման նոր և առաջավոր մեթոդներն ու եղանակները,
- Ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը,
- Այլ հաստատությունների հետ ուսումնամեթոդական համագործակցության հարցերը,
- Այլ աշխատանքներ:

4. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

- Գործող ՄԿԾ-ների ուսումնական պլանների վերանայում,
- Ուսումնական ծրագրերի /առարկաների և մոդուլների/ վերանայում,
- Նոր միջին մասնագիտական կրթական ծրագրերի ներդրում,
- Նոր ուսուցման ձևերի ներդրում,
- Ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրում,
- Դասախոսների մասնագիտական աճին նպաստող միջոցառումների նախաձեռնում,
- Միջամբիոնային կապերի ամրապնդում և կորպորատիվ մշակույթի ձևավորում,
- Աշխատանքային առաջավոր փորձի փոխանակում,
- Ուսումնամեթոդական ուղեցույցերի, ձեռնարկների, տեխնոլոգիական քարտերի կազմում,
- Արդիական, գիտական արժեք ներկայացնող հոդվածների, նորույթների, ստեղծագործական աշխատանքների, տեղեկատվության քննարկում, տպագրության հանձնելու երաշխավորում,
- Դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների ծավալում:
- Որակի մշակույթի ձևավորում,
- Դաստախոսների, կուրսղեկների խրախուսում, մասնակցության ապահովում մասնագիտական օլիմպիադաներին, փառատոններին, համաժողովներին,
- Ամփոփիչ պետական ատեստավորման ծրագրերի վերանայում,
- Դասախոսների ատեստավորման գործառույթներում դասախոսի գործունեության ուսումնաձրագրային և մանկավարժամեթոդական աշխատանքները ներկայացնող փաթեթների կազմում,
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության գնահատում,
- Ուսումնաարտադրական աշխատանքների գնահատում,
- Ամբիոնների գործունեության արդյունքների քննարկում և գնահատում:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա.Միքայելյան**

Գիտական քարտուղար՝ **Լ.Գ.Այդինյան**